ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՎԱՐԴԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Էլ.փոստ VARDASHENI@ mail.ru հեռ. 091-16-20-71

ՈՐՈՇՈՒՄ 14

22 դեկտեմբերի 2014 թվականի

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ և ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ :

Ղեկավարվելով ,,Տեղական տուրքերի և վճարների մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածների , ինչպես նայն "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով՝

Ավագանին

Որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի շինությունների /ներառյալ ոչ հիմնական/ տեղադրման / թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար

1) մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառային / տների, ինչպես նաև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ:

2) սույն կետի <<1)>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000դրամ:

բ. 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000դրամ:

գ. 1001 և 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000դրամ:

դ. 3001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100000դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ:

4) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման,արդիականացման աշխատանքների/բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1/չի նախատեսվում կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների/այդ թվում ստորգետնյա/հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ:

2/բացի օբյեկտի վերակառուցման,ուժեղացման,վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից,նախատսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների/այդ թվում ստորգետնյա/հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն ,ապա բացի սույն կետի "ա"ենթակետով սահմանված դրույքաչափի,կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով:

3/նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների/այդ թվում ստորգետնյա/շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն ,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինարարությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000դ.:

1. 2 . 3 կետերի համար կիրառել 0.5 գործակիցը:

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500դրամ:

2. Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական Շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակ 2500 դրամ :

5.Համայնքի տարածքում

1/բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվել է յուրաքանչյուր օրվա համար՝ յուրաքանչյուր քմ 200 դրամ:

2/համայնքի տարածքում հեղուկ վառելիքի,սեղմված,բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրացված առևտրի կետերում,հեղուկ վառելիքի և (կամ)սեղմված,բնականկամհեղուկացվածնավթայինգազերիհետեխնիկականհեղուկներիվաճառքիթույլտվությանհամարսահմանվումէ 150000դրամ:

3/համայնքիտարածքում գտնվող խանութներում,կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար սահմանվումէ 40000 դրամ:

6.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ կրկնօրինակներ տրամադրելու համար՝ ընթացիկ տարվա համար սահմանվել՝ 1000 դրամ :

Տեղական վճարների դրույքաչափերը

1.Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության տակ գտնվող հողեր հատկացնելու,հետ վերցնելու և վարձակալության տրամադրելը դեպքում անհրաժեշտ չափագրային այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 դրամ:

2.Աղբահանություն կատարելու դիմաց ծառայության վճար՝ 0 դրամ:

Ավագանու անդամներ՝ կողմ 5 դեմ 0 ձեռնապահ 0

Կ.Նիկալայան /կողմ/

Ս.Հայրապետյան /կողմ/

Ա.Հունանյան /կողմ/

Ա.Կարապետյան /կողմ/

Խ.Հայրապետյան /կողմ/

Համայնքի ղեկավար՝ Գ.Բարխոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԴԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ *0420042*